Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» ծրագրի ներքո արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

1. Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ հրավիրող), որոնք 2026թ. սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում MyAmeria հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի (այդ թվում՝ անհատական կոդի) միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ և պատվիրել Mastercard Digital տեսակի քարտ (այսուհետ նաև՝ Հաջողված ուղղորդում), հնարավորություն կստանան մասնակցելու Արշավին, որի շրջանակում՝
   1.1 Հաջողված ուղղորդումների քանակը 5 և ավելի լինելու դեպքում Հրավիրողը կստանա 5000 ՀՀ դրամի չափով խրախուսման վճար (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառված չեն) յուրաքանչյուր հաջողված ուղղորդման համար Արշավի գործողության ժամկետի ավարտին՝ մինչև **2026 թվականի նոյեմբերի 5-ը ներառյալ,** «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իր բանկային հաշվին:
   1.2 Հրավերը մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը ներառյալ հաջողությամբ ընդունելու և նշված պայմաններին բավարարելու պարագայում Հրավիրվողը մինչև 2026 թվականի նոյեմբերի 5-ը ներառյալ կստանա 1000 ՀՀ դրամ խրախուսման վճար «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իր քարտին:
2. Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.
   - Հրավիրողը պետք է հրավերն ուղարկած լինի առավելագույնը մինչև նոյեմբերի 1-ը ներառյալ,
   - Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի **Mastercard Digital** քարտ հեռավար եղանակով՝ գրանցվելով հրավերի արդյունքում ստացված SMS հաղորդագրության հղմամբ կամ գրանցվելու ժամանակ օգտագործի Հրավիրողի անհատական կոդը,
   - Հրավիրվողը պետք է վերոնշյալ եղանակով Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Digital տեսակի քարտ 2026թ. թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026թ. նոյեմբերի 1-ը ներառյալ,
   - Խրախուսման վճարի ստացման համար հրավիրողը պետք է ունենա 5 և ավել հաջողված ուղղորդում, եթե հաջողված հրավերների քանակը փոքր է 5-ից, ապա խրախուսման վճար չի տրամադրվում,
   - Արշավի ամփոփման պահին՝ **նոյեմբերի 5-ի դրությամբ**, հրավիրողը և հրավիրվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
   - Հրավիրվողը չպետք է լինի **2025թ. հունիսի 1-ից** հետո փակված և արշավի շրջանակում վերաբացված հաճախորդ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, +(37412) 561111, office@ameriabank.am

Հավելված 17
Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների

Հրավիրիր ընկերոջդ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.10.2024թ. թիվ 01/148/24 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 03.09.2026թ. թիվ 01/136/26 որոշմամբ, և ուժի մեջ է 14.09.2026թ-ից:

1. Սահմանումներ

1.1. **Ուղղորդում՝** Բանկի ծառայություններից օգտվելու նպատակով անմիջապես Ուղղորդող անձի կողմից կամ Բանկի կողմից Ուղղորդող անձի անունից Ուղղորդվող անձին հրավերի ուղարկում, որը կարող է իրականացվել Բանկի Հեռավար սպասարկման համակարգում հասանելի եղանակով Ուղղորդման հղում պարունակող հաղորդագրություն ուղարկելու միջոցով, այդ թվում՝ Ուղղորդող անձի կողմից Ուղղորդվող անձի կոնտակտային տվյալները Բանկին տրամադրմամբ/Հեռավար սպասարկման համակարգ ներմուծմամբ, և/կամ Ուղղորդող անձի կողմից Պրոմոկոդի տրամադրմամբ կամ տարածմամբ:

1.2. **Ուղղորդող անձ՝** Բանկի **Հաճախորդ**, ով իրականացրել է **Ուղղորդում**:

1.3. **Ուղղորդվող անձ՝** ֆիզիկական անձ, ով **Ուղղորդման հղման և/կամ Պրոմոկոդի** կիրառմամբ դիմել է Բանկի ծառայություններից օգտվելու նպատակով:

1.4. **Ուղղորդման հղում՝** ունիկալ մեկանգամյա օգտագործման հղում, որը **Բանկին** հնարավորություն է տալիս նույնականացնել համապատասխան **Ուղղորդող անձին** և **Ուղղորդումը**:

1.5. **Պրոմոկոդ՝** Բանկի կողմից **Ուղղորդող անձին** տրամադրվող և/կամ Բանկի Հեռավար սպասարկման համակարգում Ուղղորդող անձի կողմից գեներացվող կոդ, որի կիրառմամբ Բանկը նույնականացնում է համապատասխան **Ուղղորդող անձին** և **Ուղղորդումը**:

2. Ուղղորդման ծրագրի պայմաններ

2.1. Սույն **Հավելվածը** սահմանում է Բանկի «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի (այսուհետ՝ **Ուղղորդման ծրագիր**) պայմանները:

2.2. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդող անձը** իրականացնում է **Ուղղորդում**:

2.3. **Ուղղորդող անձը**, **Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Ուղղորդվող անձին** հասանելի դառնա **Ուղղորդող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.4. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդվող անձը** պետք է անցնի հաղորդագրության մեջ նշված **Ուղղորդման հղումով** և/կամ կիրառի **Պրոմոկոդը, և** իրականացնի պահանջվող գործողությունները՝ տվյալ **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը** ստանալու համար: Բանկի կողմից կարող են սահմանվել **Ուղղորդման ծրագրին** մասնակցության հավելյալ պայմաններ: **Ուղղորդումը** համարվում է հաջողված, եթե **Ուղղորդվող անձը** սույն կետում նշված գործողությունների արդյունքում ստանում է **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը**, և/կամ տեղի են ունենում **Բանկի** կողմից սահմանված՝ **Ուղղորդումը** հաջողված համարվելու այլ պայմանները (առկայության դեպքում):

2.5. **Ուղղորդվող անձը, Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Բանկի** հաճախորդ դառնալու դեպքում՝ **Ուղղորդող անձին** հասանելի դառնա **Ուղղորդվող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.6. **Բանկի** կողմից **Ուղղորդման հղման** և/կամ **Պրոմոկոդի** համար կարող են սահմանվել վավերականության ժամկետ:

2.7. **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների շրջանակներում Բանկի **Հաճախորդների** ներգրավումը քաջալերելու, **Ծառայությունների** վաճառքն ընդլայնելու նկատառումներից ելնելով **Ուղղորդման ծրագրի** ներքո հաջողված **Ուղղորդման** դիմաց կարող են սահմանվել խրախուսանքի միջոցներ՝ դրամական վճարումների, զեղչերի և/կամ այլ հավելյալ հնարավորությունների տեսքով: Խրախուսանքի միջոցները, դրանց չափերը և տրամադրման կարգը սահմանվում են **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների պայմաններով:

2.8. **Ուղղորդումը Բանկի** համար չի առաջացնում **Ուղղորդվող անձին Ծառայության** մատուցման պարտավորություն, քանի որ **Բանկը Ծառայություններ** մատուցում է **Օրենսդրությամբ** և **Բանկի** ներքին իրավական ակտերով ամրագրված պահանջների պահպանման դեպքում: